Հայը և հայը

Ուշ գիշերով Ռուսաստանի Ռոստով քաղաքում մի գարեջրատան մոտով անցնում էի, երբ սպիտակ վերնազգեստով մի սպասավորի տեսա, որն անպայման հայ էր, և, ուրեմն, մոտեցա, հարցրի.
– Իմա՞լ ես, տնավե՛ր, իմա՞լ ես:
Զգիտեմ՝ ինչից հասկացա, որ հայ է, բայց հասկացա: Պատճառը միայն թուխ դեմքը չէր, ոչ էլ բարձր ու ծուռ ֆիթը, ոչ էլ թանձր ու խիտ գանգուրն ու խորադիր աչքերը: Բարձր ու ծուռ ֆիթ, խորադիր աչք, խիտ գանգուր ներ շատերն ունեն, բայց հայ չեն: Մեր ցեղը զարմանալի մի ցեղ է, և ես ճամփա եմ ընկել Հայաստանը գտնե լու: Ցավում եմ, ձեզ տխրեցնելու եմ, պարոնա՛յք, բայց պիտի ասեմ, որ Հայաստան չկա:
Փոքր Ասիայում կա մի փոքր հողակտոր, այնտեղ հովիտներ են, լեռներ, լճեր ու քաղաքներ են, աշխարհի ու րիշ վայրերից պակաս չեն, բայց Հայաստանն այդ չէ, պարոնա՛յք: Ես կսկիծով եմ ասում, բայց չկա Հայաս տան, պարոնա՛յք, կան միայն մարդիկ, որ այս աշխարհում ապրում են որպես իրենց երկրում: Եվ Ամերիկա էլ չկա, պարոնա՛յք, Անգլիա էլ չկա, Ֆրանսիա էլ չկա, Իտալիա էլ չկա, միայն մարդկանց երկիրը կա, պարո նա՛յք:
Ոտք դրի, ուրեմն, գարեջրատուն՝ բարև տալու ինձ նման մեկին՝ օտար աշխարհի մեջ մի օտարականի:
– Վա՜յ,- ասավ զարմանքի այն շեշտով, որ մեր լեզուն ու խոսքը համակ ուրախություն է դարձնում:- Դո՞ւ:
Եվ այդ դուն ճիշտ ես էի՝ իմ հագուստը, կոշիկները, իմ գլխարկը ու, թերևս, իմ դեմքի ամբողջ Ամերիկան:
– Ինչպե՞ս հոս ինկար:
– Գաղտուկ,- ասացի խանդաղատանքով,- կխլեի: Ո՞րն է քու քաղաքդ, ո՞ւր ծնած ես: (Հայերեն ասում է՝ որ տե՞ղ ես աշխարհ եկել):
– Մուշ,- ասաց:- Ո՞ւր կերթաս, հոս ի՞նչ կընես, դուն ամերիկացի ես, քու հագուստդ ամերիկացու է:
Մուշ:
Ես սիրում եմ այդ քաղաքը: Ես կարող եմ սիրել որևէ վայր, որը երբեք չեմ տեսել, վայր, որ այլևս գոյություն չունի, որի բնակիչները սպանված են: Մուշ… քաղաք է, ուր հայրս իր երիտասարդությանը եղել է:
Տե՛ր Աստված, ի՜նչ լավ էր մտեցի այդ թուխ հային հանդիպելը: Դուք անգամ չեք պատկերացնի, որքան լավ է հայի համար հանդիպումը մի ուրիշ հայի՝ աշխարհի կորած-մոլորած մի անկյունում, այն էլ գարեջրատանը, մի տեղ, ուր մարդիկ խմում են: Մե՛զ ինչ, թե գարեջուրն անհամ է, և մե՛զ ինչ անգամ բռնապետությունները: Դրանք այդպես են ու այդպես էլ պիտի լինեն: Աշխարհում կան բաներ, որ փոխելն անկարելի է:
– Վա՜յ,- ասավ կամաց ու մեղմ ուրախությամբ: – Ու լեզուն կխոսիս, չես մոռցած:
Ու երկու գավաթ տեղական անհամ գարեջուր բերեց:
Եվ հայոց մեր շարժունակը, որ այնքան բան է ասում, ծնկներին խփելն ու պայթուն ծիծաղը: Եվ կյանքի ու մեծ-մեծ գաղափարների ծաղրը: Եվ հայերեն բառը, նայվածքը, ժպիտը, և այս ամենի միջից զարմանալի հառնումը ցեղի՝ ուշացած, բայց դարձյալ զորավոր, թեև տարիներ են թավալվել, թեև քաղաքները կործանվել, հայրերը, եղբայրներն ու զավակները սպանվել, վայրերը մոռացվել, երազները փշրվել, և հոգիները ոխից սևացել են:
Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը, կոդակ ու հպարտ մարդ կանց այս ցեղը, որի պատմությունը պատմված, բոլոր կռիվները մղված ու տանուլ են տրված, որի շինություն ները խորտակված, գրքերը չընթերցված ու երգերը լռած են:
Փորձե՛ք կործանել այս ցեղը, ասացե՛ք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնված:
Կործանեցե՛ք Հայաստանը, տեսե՛ք՝ կկարողանա՞ք: Իրենց տներից էեցե՛ք անապատ, մի՛ մոռացեք ձեռքներից խլել ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի՛ տվեք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսե՛ք՝ նրանք դարձ

յալ պիտի չապրե՞ն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը իսան տարի հետո հանդի պեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզվով:
Ջանացեք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, շուճշանորդիեե՛ր, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղա փարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձե՛ք ջնջել նրանց: